Հաստատված է
«Վիլկո» ՍՊԸ
Միակ մասնակից
«Պարադեպլատց Լիմիթեդ» ՍՊԸ
Ի դեմս «Ալստերիս մենեջմենտ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ստելա Մակրի կողմից

«20» հունիս 2025թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

1.1. «Վիլկո» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն» և/կամ «Խորհրդատու») Հայաստանի Հանրապետությունում գրանցված և լիցենզավորված ներդրումային ընկերություն է:

1.2. Ընկերության վավերապայմաններն են՝

1.2.1. Անվանումը՝ **«Վիլկո» ՍՊԸ**

1.2.2. Ներդրումային ընկերության լիցենզիա՝ **Համար 0008**

1.2.3. Հասցե՝ **ՀՀ, ք. Երևան 0002, Սարյան փ. 26/2**

1.2.4. Կայք՝ **wilco.am**

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Խորհրդատվական ծառայությունների մատուցման սույն կանոնակարգում (այսուհետ՝ «**Կանոնակարգ**») օգտագործվող հասկացությունները, եթե հատուկ սահմանված չեն այստեղ, կրում են այն նշանակությունը, որը սահմանված է ՀՀ օրենքներում և դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերում, իսկ վերջիններիս կողմից սահմանված չլինելու դեպքում՝ միջազգային գործարար սովորույթներով այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

2.2. **Ընկերություն** և/կամ **Խորհրդատու**՝ «Վիլկո» ՍՊԸ,

2.3. **Հաճախորդ՝** ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ում Ընկերության կողմից մատուցվում են Կանոնակարգով սահմանված ծառայությունները,

2.4. **Գործընկեր՝** անձ, որի ներգրավմամբ և/կամ որի միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Խորհրդատուն Ծառայություններ է մատուցում Հաճախորդին,

2.5. **ՀՀ ԿԲ՝** Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ,

2.6. **Տեղեկատվության փոխանակման միջոցներ՝** Ընկերության և Հաճախորդի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում ամրագրված կապի միջոցներ,

2.7. **Խորհրդատվական ծառայություններ՝** Կանոնակարգի 4–րդ Գլխով սահմանված ոչ հիմնական մեկանգամյա խորհրդատվական ծառայությունները,

2.8. **Պայմանագիր՝** Ընկերության և Հաճախորդի միջև կնքված՝ Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի հիման վրա ծագում և որով, կարգավորվում են Հաճախորդի և Խորհրդատուի իրավունքներն ու պարտականությունները՝ կապված Խորհրդատուի կողմից Հաճախորդին Ծառայություններ մատուցելու հետ:

2.9. **Կիրառելի օրենսդրություն՝** ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտեր, ՀՀ ԿԲ կանոնակարգեր ինչպես նաև սույն Կանոնակարգի, Ընկերության ներքին իրավական փաստաթղթերի և համապատասխան Պայմանագրի դրույթներ:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Կանոնակարգը սահմանում է Ընկերության կողմից Հաճախորդներին մատուցվող Խորհրդատվական ծառայությունների մատուցման կարգը և կանոնները:

3.2. Ընկերությունը հանդիսանում է ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ներդրումային ծառայություններ մատուցող կազմակերպություն և գործում է վերջինիս վերահսկողության ներքո:

3.3. Կանոնակարգը կազմված է և կարգավորվում է Կիրառելի օրենսդրությանը համապատասխան և շրջանակներում:

3.4. Խորհրդատվական ծառայությունների մատուցումը իրականացվում է բացառապես կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.5. Կանոնակարգը հանդիսանում է հրապարակման ենթակա փաստաթուղթ, որը հասանելի է ցանկացած շահագրգիռ կողմի՝ ծանոթանալու նպատակով: Կանոնակարգը տեղադրվում է Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

3.6. Կանոնակարգի յուրաքանչյուր դրույթ մեկնաբանվում է դրա բառացի շարադրանքի հիման վրա: Եթե որևէ դրույթի կոնկրետ շարադրանքը պարունակում է երկիմաստություն, ապա այդ դրույթները մեկնաբանվում են Պայմանագրի, Կանոնակարգի և Ընկերության ներքին իրավական ակտերի ընդհանուր տրամաբանության շրջանակներում:

3.7. Կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Ընկերության կողմից միակողմանիորեն՝ այդպիսի փոփոխությունից կամ լրացումից հետո փոփոխության/լրացման մասին Պայմանագրով սահմանված կարգով Հաճախորդին ծանուցելու պայմանով: Կանոնակարգի բոլոր փոփոխությունները և լրացումները Կանոնակարգի անբաժանելի մասն են:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

4.1. Կանոնակարգը կարգավորում է Ընկերության կողմից մատուցվող հետևյալ խորհրդատվական ծառայությունների մատուցման կանոնները.

4.1.1. Ֆինանսական շուկաների և ներդրումային հնարավորությունների վերլուծություն և գնահատում,

4.1.2. Հաճախորդի ռիսկային հակվածության և ներդրումային նպատակների հիման վրա պորտֆելի կառուցվածքի և ակտիվների բաշխման ռազմավարությունների վերաբերյալ խորհրդատվություն,

4.1.3. Արժեթղթերի, պարտատոմսերի, ֆոնդերի և այլ ֆինանսական գործիքների վերաբերյալ առաջարկությունների տրամադրում,

4.1.4. Ներդրումների կանոնակարգային համապատասխանության և պատշաճ ուսումնասիրության (due diligence) վերաբերյալ ուղղորդում,

4.1.5. ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ծառայություններ:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Խորհրդատուն Հաճախորդին Ծառայությունները մատուցում է գրավոր՝ Խորհրդատուի և Հաճախորդի միջև նախապես համաձայնեցված՝ Տեղեկատվության փոխանակման ցանկացած հուսալի միջոցով: Խորհրդատուի և Հաճախորդի միջև տեղեկատվության փոխանակման կարգը սահմանվում է Պայմանագրով:

5.2. Խորհրդատուի և Հաճախորդի միջև հաղորդակցությունը իրականացվում է Պատասխանատու աշխատակցի միջոցով: Խորհրդատուն Ծառայությունները մատուցում է Հաճախորդի ներկայացրած տեղեկությունների և փաստաթղթերի հիման վրա: Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում Խորհրդատուի կողմից պահանջվող տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, Խորհրդատուն զգուշացնում է Հաճախորդին նման վարքագծի պայմաններում խորհրդատվության տրամադրման անհնարինության մասին, հետևաբար անհնարին է դառնում նաև գնահատել այդ ծառայությունների համապատասխանությունը Հաճախորդի պահանջներին և նրա անհատական ցանկություններին:

5.3. Կանոնակարգով մատուցվող ծառայությունները չեն ներառում հիմնական՝ ներդրումային խորհրդատվության ծառայության տրամադրում և ըստ այդմ, Ընկերության կողմից Հաճախորդին տրամադրվող ցանկացած տեղեկատվություն չի համարվում Ներդրումային խորհրդատվություն և Ընկերությունը չի երաշխավորում Հաճախորդի որևէ ներդրում: Հաճախորդն առանց սահմանափակման անձամբ է պատասխանատու իր ընդունած բոլոր որոշումների և կատարած բոլոր գործարքների համար:

5.4. Հաճախորդը անձամբ է պատասխանատու իր որոշումների համար և ընդունում է դրանց հետ կապված բոլոր ռիսկերը: Ընկերությունը պատասխանատու չէ (այդ թվում նաև համապարտ) Հաճախորդի կրած վնասների համար: Այնուամենայնիվ, Ընկերությունը կարող է տեղեկացնել Հաճախորդին նման ռիսկերի մասին, եթե Խորհրդատվական ծառայությունների մատուցման ընթացքում ունենա ողջամիտ կասկած կամ եզրակացություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Կանոնակարգի բոլոր լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Ընկերության լիազոր մարմնի կողմից (եթե Ընկերության Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ) և ուժի մեջ են լիազոր մարմնի որոշմամբ սահմանված ժամկետում:

6.2. Ընկերությունը, իր ներքին իրավական ակտերով և Կանոնակարգերով սահմանված իրավակարգավորումների հիման վրա ջանքեր է գործադրում Ընկերության և Հաճախորդներին, ինչպես նաև Հաճախորդների միջև շահերի բախման հնարավոր դեպքերը կանխելու և/կամ կանխարգելելու ուղությամբ: Եթե Ընկերությունն իր ջանքերի գործադրմամբ չի կարողանում կանխարգելել նման շահերի բախման դեպքերը, այդ մասին տեղեկացնում է Հաճախորդին:

6.3. Հաճախորդը գիտակցում է, որ Ընկերության հետ Պայմանագրի շրջանակներում գործարար փոխհարաբերության ժամանակ հնարավոր են դեպքեր, երբ Ընկերությունը տեղեկացված չէր կամ չէր կարող տեղեկացված լիներ շահերի բախման դեպքերի մասին:

6.4. Հաճախորդի անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ Ընկերության կրում է պարտավորություն համաձայն Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի:

6.5. Ընկերությունը կարող է բացահայտել Հաճախորդի ներկայացրած կամ իրեն հայտնի դարձած Հաճախորդի մասին տեղեկությունները Ընկերության հետ փոխկապակցված անձանց, Գործընկերներին կամ Ընկերության պարտավորությունների կատարման ժամանակ:

6.6. Կանոնակարգի 6.5. կետով սահմանված տեղեկությունները Ընկերությունը չի բացահայտում, եթե համոզված չէ, որ նրա հետ փոխկապակցված անձինք չեն բացահայտի այդ տեղեկությունները երրորդ անձանց, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

6.7. Ընկերության և Հաճախորդի միջև ծագած բոլոր վեճերը և անհամաձայնությունները կարող են լուծվել դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ՀՀ իրավասու դատարաններում: Կողմերի համաձայնությամբ դատավարության ցանկացած փուլում վեճի քննումը կարող է հանձնվել Կողմերի համատեղ ընտրված արբիտրաժային տribունալ: